


Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 29-ի N 1246 - Ա որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ «ՄԱՅԼԵՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՆԳՍԱՎԱՅՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Սույն ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) միտված է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը, ինչպես նաև բնակչության մեջ առողջ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը:



Գծապատկեր 1. Տեղանքի քարտեզ

Հարկ է փաստել, որ ՀՀ-ն, որպես լեռնային զբոսաշրջության ուղղություն, տարածաշրջանում գտնվում է ամենաթույլ դիրքերում. որպես առաջատար հանդես է գալիս Վրաստանի Հանրապետությունը, որից հետո՝ Ադրբեջանի Հանրապետությունը:

Լեռնային զբոսաշրջությունը, որպես առանձին ուղղություն, համաշխարհային մակարդակով ներառում է շուրջ 420 միլիոն զբոսաշրջիկ և դեռևս շարունակում է աճ գրանցել:

ՀՀ-ում ներկայումս կա գործող երկու հանգստյան գոտի (Ջերմուկ և Ծաղկաձոր համայնքներում), որոնք առաջարկում են լեռնային, մասնավորապես՝ լեռնադահուկային ժամանց:

Ըստ տարբեր տվյալների, օրինակ՝ Ծաղկաձորի զբոսաշրջիկների թիվը տարեկան կտրվածքով կազմում է շուրջ 250 հազար այցելու: Համեմատության համար հարկ է նշել, որ Վրաստանի միայն Գուդաուրի լեռնադահուկային համալիրի այցելուների թիվը միայն ձմեռային շրջանում անցնում է 650 հազարը, իսկ նմանատիպ հանգստյան գոտիները Վրաստանում հինգն են, որոնց հիմնական այցելուները ՌԴ-ից և ԵՄ-ից են:

Այսօր Ծաղկաձորում գործող հանգստյան տների և հյուրանոցների տարողունակությունը կազմում է շուրջ 3200 մահճակալ (օր): Զբոսաշրջիկների մեծ մասը նույնպես ՌԴ քաղաքացիներ են, երկրորդ տեղում են ԻԻՀ-ից ժամանող այցելուները: Հարկ է նշել, որ այս առումով Հայաստանը գտնվում է շահեկան դիրքում, քանի որ ոռոս զբոսաշրջիկները կարող են ժամանել ՀՀ ներքին անձնագրերով: Բացի այդ, ՀՀ կարող են ժամանել նաև ՌԴ ուժային կառույցների ներկայացուցիչները, որոնք աշխատանքային պարտավորություններով պայմանավորված՝ չեն կարող ճանապարհորդել ԵԱՏՄ սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է գնային քաղաքականությանը, հարկ է նշել, որ Ծաղկաձորում ճոպանուղու օրական տոմսն արժե 12,000 դրամ (շուրջ 25 ԱՄՆ դոլար), իսկ Վրաստանում 40 լարի (շուրջ 15 ԱՄՆ դոլար): Այսպիսով՝ Վրաստանը այցելուների քանակով անհամեմատ շահեկան դիրքում է, սակայն տուժում է ոռոսական շուկայի ներուժը թերի օգտագործվելու առումով:

Լեռնային համալիրների զարգացման պատմության մեջ շատ քիչ են այնպիսի հանգստավայրեր, որոնք նախագծվել և կառուցվել են այդ նպատակով. որպես կանոն՝

դրանք կառուցվել են արդեն գոյություն ունեցող բնակավայրերի հիման վրա և ունեն գարգացման ուրույն կառուցակարգ:

Լեռնային համալիրների հիմնական ընդհանուր գիծն այն է, որ ճոպանուղիների ճնշող մեծամասնությունը պետական կամ համայնքային սեփականություն է, իսկ հյուրանոցները, հանգստյան և ժամանցի կենտրոնները՝ մասնավոր սեփականություն (Վրաստանի և Ադրբեջանի օրինակով): Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում հատկանշական է պետության դերը ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման հարցում:

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն նախաձեռնությունն անսախադեպ է, քանի որ մասնավոր կազմակերպությունն իր վրա է վերցնում ենթակառուցվածքային այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են՝ ճոպանուղու, սահուղիների կառուցում, արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերում և տեղադրում, որոնք առհասարակ իրականացվում են պետության կամ համայնքի կողմից՝ փոխարենը ակնկալելով պետական աջակցություն կոնկրետ ուղղություններով: Ծրագրի շրջանակներում նախատեսված ենթակառուցվածքներն իրենց շուրջ են կենտրոնացնելու հյուրանոցային և ժամանցային ոլորտներում այլ ներդրողների, որոնք ներդրումներ կատարելով՝ նպաստելու են ոլորտի շարունակական զարգացմանը՝ ապահովելով լրացուցիչ աշխատատեղեր տվյալ համայնքի բնակիչների և ՀՀ այլ քաղաքացիների համար: Այդպիսի ենթակառուցվածքներից ամենակարևորը ճոպանուղին է, որը բազմիցս ապացուցել է իր «սոցիալական մագնիսի» ազդեցությունը երկրի, այդ թվում՝ տվյալ մարզի տնտեսության վրա, և պետության կողմից համապատասխան աջակցությունը միանշանակ կնպաստի ծրագրի բարեհաջող իրականացմանը:

Ճոպանուղիները լինելու են եվրոպական ամենաարդիական տեխնոլոգիաներով հագեցած՝ փակ հոնդոլային տիպի, արագընթաց, ինչպիսիք տեղադրված են աշխարհահռչակ լեռնադահուկային կենտրոններում (Իշգլ, Սանտ Անտոն, Ինսբրուկ և այլն):



Գծապատկեր 2. Ծրագրով նախատեսված ճոպանուղու նախանշված տեսքը

Ծրագրի իրականացումը բացառիկ է նրանով, որ նմանօրինակ ենթակառուցվածքային ներդրումներ մասնավոր հատվածի կողմից Հայաստանում երբևէ չեն իրականացվել, և նման համագործակցության հաջողված օրինակը կարող է հզոր խթան հանդիսանալ պետություն-մասնավոր համագործակցության հետագա զարգացման համար:

ՀՀ կառավարության կողմից բազմիցս արձանագրվել է, որ զբոսաշրջությունը պետության համար առաջնահերթ ուղղություններից մեկն է և համարվում է արտահանման ձև: Բացի այդ՝ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ պետության կողմից իրականացված ծախսերի հետգնումն առավել արդյունավետ է, իսկ ծրագիրն առանձնահատուկ է նրանով, որ չի ակնկալում պետության կողմից հավելյալ ծախսեր:

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեռնային համալիրի կառուցման ընթացքում ներգրավված կլինեն շինարարության ոլորտի շուրջ 250 աշխատողներ, իսկ ծրագիրն իրականացնելուց հետո կստեղծվի շուրջ

1500 հիմնական աշխատատեղ՝ միջինը 180,000 դրամ աշխատավարձով: Ծրագրի հիմնական շահառուն է զբոսաշրջային սպառողը, ինչը ենթադրում է տնտեսության համար հավելյալ արժեքի ստեղծում և արտարժույթային դրամական միջոցների հոսք դեպի ՀՀ:

Կառուցվող համալիրը հնարավորություն է ունենալու սպասարկելու օրական 6000 հաճախորդի (տարեկան՝ 2,160 հազ. մարդ/օր): Նմանատիպ հանգստյան վայրերում 1 հաճախորդի միջին անցկացնելիք ժամանակը գնահատվում է 4 օր, հետևաբար համալիրը հնարավորություն կունենա սպասարկելու տարեկան միջինը շուրջ 500 հազ. հաճախորդի: Սակայն ըստ կանխատեսումների՝ հաշվի առնելով նաև համալիրի սեզոնային բնույթը՝ ծրագրի իրականացման համար տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գնահատվում է 40 տոկոս (շուրջ 200 հազ. հաճախորդ):

Հարկ է նշել, որ հաճախորդները կլինեն և՛ ներգնա, և՛ ներքին զբոսաշրջիկներ, և ելնելով դրանից՝ կանխատեսվում է, որ 1 հաճախորդի կողմից ծախսը միջինը կկազմի 100 հազ. դրամ, ինչը նշանակում է, որ համալիրի կառուցման արդյունքում կունենանք տարեկան լրացուցիչ շուրջ 20 մլրդ դրամի ծառայությունների ծավալի ավելացում: Հիմք ընդունելով հանրապետությունում ծառայությունների ոլորտի կողմից ստեղծվող ավելացված արժեքի միջին տեսակարար կշիռն իր ծավալի նկատմամբ՝ գնահատվում է, որ համալիրի շահագործմամբ կստեղծվի տարեկան 12.6 մլրդ դրամ լրացուցիչ ավելացված արժեք, որն այլ հավասար պայմաններում կնպաստի ՀՆԱ-ի աճին մոտ 0.2 տոկոսային կետով: Արդյունքում պետական բյուջե կվճարվեն ավելի քան 1.2 մլրդ դրամ հարկեր:

Հաշվի առնելով, որ ծրագրի իրականացման հետագա փուլերում նախատեսվում է ընդլայնել համալիրը՝ ներառելով այլ ծառայություններ ևս, վերը նշված ցուցանիշները մի քանի անգամ կաճեն:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Ծրագիրն իրականացնող կազմակերպությունը պատրաստվում է շուրջ 15 միլիարդ ՀՀ դրամ ներդնել միայն ճոպանուղու և սահուղիների կառուցման համար, ինչը կդառնա իր շուրջ զբոսաշրջային նոր քաղաքի ստեղծման առաջին և ամենակարևոր գրավականը:

Կազմակերպությունը կատարելու է ներդրում ճոպանուղու, սահուղիների, արհեստական ձնագոյացման համակարգի, գլխավոր հատակագծի և ժամանցային կենտրոնների (տորոգան, տյուրինգ, «կախարդական կարպետ», գիփլայն, ջրային ատրակցիոններ) կառուցման համար: Միաժամանակ, պետական աջակցությամբ, կազմակերպությունը ներդրողի համար ավելի գրավիչ է դարձնելու ոչ միայն սույն շրջանը, այլ նաև ողջ հանրապետությունը, ինչպես նաև ապահովելու է ևս 15 միլիարդ դրամի ներդրումներ հյուրանոցային հատվածում տարբեր ներդրողների կողմից (ծրագրի հիմնական տնտեսական ցուցանիշները և առաջին փուլով կատարվելիք աշխատանքների ժամանակացույցը ներկայացված են, համապատասխանաբար, NN 1 և 2 աղյուսակների միջոցով):

Աղյուսակ 1. Ծրագրի հիմնական տնտեսական ցուցանիշները

Ցուցանիշ	Արժեք	
Ներդրումների ընդհանուր ծավալ (դրամ)	30,000 մլն, որից՝	
	15,000 մլն՝ ճոպանուղի և սահուղի	15,000 մլն՝ հյուրանոցային հատված
Աշխատատեղերի քանակ (մարդ)	250 (շինարարության ոլորտում)	1500 (հիմնական)
Միջին աշխատավարձի չափ (դրամ)	180 հազ.	
Սպասարկվող հաճախորդների տարեկան քանակ (մարդ)	200 հազ.	
1 հաճախորդի կողմից կատարվելիք միջին ծախսը համալիրում մնալու ընթացքում (դրամ)	100 հազ.	
Ծառայությունների ծավալի ավելացում տարեկան (դրամ)	20,000 մլն	
Լրացուցիչ ավելացված արժեքի ստեղծում, տարեկան (դրամ)	12,600 մլն	
Նպաստում ՀՆԱ-ի տարեկան աճին (տոկոսային կետ)	≈0.2	
ՀՀ պետական բյուջե վճարվելիք հարկերի կանխատեսվող ծավալ (դրամ)	1,200 մլն-ից ավելի	

Այսպիսով՝ 30 միլիարդ դրամի ծրագիրն իրականացնելու համար ՀՀ կառավարության կողմից ակնկալվում է աջակցություն հետևյալ հարցերում.

1. Ճանապարհի և ավտոկայանատեղի

Ճանապարհի և ավտոկայանատեղիի կառուցումը կվերացնի անհարմարությունները այն զբոսաշրջիկների համար, որոնք ուղևորվելու են Հայաստան իրենց ավտոմեքենաներով, բացի այդ՝ կբարձրանա շրջանի նկատմամբ գրավչությունը թե՛ զբոսաշրջիկների, թե՛ ներդրողների համար:

2. Կոմունիկացիաներ (ջուր, հոսանք, գազ)

Կոմունիկացիաների անցկացումը կազատի ընկերությանը տարբեր փաստաթղթային քաշքշուկներից: Ակնկալվող աջակցությունը պետական ֆինանսական ռեսուրս չի պահանջում, իսկ մատակարար կազմակերպությունները նոր սպառողներ են ձեռք բերում:

Կոմունիկացիաներին առնչվող տեղեկատվությունը ներկայացված է **Գծապատկեր 3-ում**:

3. Տարածքի նկատմամբ գերակա հանրային շահի ճանաչում (միայն գյուղատնտեսական նշանակության հողերի հատվածում)

Տարածքի նկատմամբ գերակա հանրային շահի ճանաչումը (միայն գյուղատնտեսական նշանակության հողերի հատվածում) հնարավոր կդարձնի ծրագրի իրագործումը, քանի որ բոլոր հողերը դեռ 90-ականներին անվճար հիմունքներով տրամադրվել են գյուղացիներին և ներկայումս չեն օգտագործվում: Հետևաբար, սույնով նաև կտնտեսվեն ներդրող կազմակերպության թե՛ ժամանակային, թե՛ ֆինանսական ռեսուրսները, որոնք հնարավոր կլինի ուղղել նախատեսվող գործընթացի առավել արագ և որակյալ իրականացմանը:

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսված տարածքի նկատմամբ հանրության գերակա շահի ճանաչման գործընթացում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող տարածքների ձեռքբերող հանդիսանալու է ընկերությունը, ինչի արդյունքում պետության համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չեն առաջանա:

4. Ազատ տնտեսական գոտի

Տարածքն ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) կարգավիճակ ստանալով (20 տարի ժամկետով)՝ կդառնա Առաջանցիկ զարգացման գոտի (ՌԴ-ի՝ «Территория опережающего Развития»-ի կամ Վրաստանի օրինակով): Այստեղ ներդրում իրականացնող յուրաքանչյուր սուբյեկտ հնարավորություն է ստանում օգտվել ԱՏԳ-ում տրամադրվող՝ օրենքով նախատեսված արտոնություններից: Այսօր այդ տարածքը որևէ հավելյալ արժեք չունի և չի կարող որևէ հարկման բազա ապահովել, իսկ այս դեպքում, տարիներ անց կստեղծվի ծաղկուն հանգստավայր, հավելյալ արժեք տնտեսությունում, կայացած եկամտաբեր ոլորտ, շնորհակալ քաղաքացիներ, գոհ ներդրողներ և տնտեսական գործունեություն ծավալող մի շարք կազմակերպություններ, որոնք հարկվելու են ՀՀ օրենսդրության համաձայն: Նմանօրինակ հարկային արտոնություն տրամադրվում է Վրաստանում, ՌԴ-ում և այլ երկրներում, որտեղ պետական աջակցությունը չի սահմանափակվում հարկային արտոնությունով, այլ նաև բուն ներդրումներ են իրականացվում ենթակառուցվածքներում:

Ծրագրի իրականացման վայրում այսօր իրականացվում են միայն գյուղատնտեսական աշխատանքներ (խոտհարքի տեսքով), որոնք նույնպես չեն հարկվում:

ԱՏԳ-ի կարգավիճակի տրամադրումը կիրականացվի բացառապես առկա օրենսդրության շրջանակում, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի դրույթների, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով սահմանված մի շարք պահանջների և պայմանների, ինչպես նաև ազատ տնտեսական գոտիների վերաբերյալ այլ իրավական ակտերով սահմանված դրույթների պահպանման դեպքում:

5. Զբոսաշրջային կենտրոն սահմանել և ներառել պետական ֆինասավորմամբ ծրագրերում և գովազդներում

Պետության կողմից գովազդվող և խրախուսվող ցանկացած ոլորտ և ուղղություն, այդ թվում՝ լեռնային (լեռնադահուկային), ևս պետք է գովազդվի և խրախուսվի:

6. Խաղատան լիցենզիայի տրամադրում (Ձերմուկի համար սահմանված սակագնով)

Խաղատան լիցենզիայի տրամադրումը կարող է դառնալ այլընտրանքային ժամանցի տեսակ զբոսաշրջիկների համար և հավելյալ մուտքեր կապահովի պետական բյուջե:

7. 580 հա տարածքի տրամադրում՝ հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունն անհրաժեշտության դեպքում ըստ հատվածների իրականացմամբ: Մասնավորապես, օրինակ՝ եթե գյուղատնտեսական նշանակության հողատարածքում իրականացվելու է հյուրանոցի կառուցում, համապատասխան փոփոխությունը կատարել միայն այդ հատվածում, և այսպես շարունակ: Ընկերությունը նախատեսում է համապատասխան վճարումներն իրականացնել ծրագրով նշված հողատարածքի կամ դրա հատվածների օտարման դեպքում: Հողերի նպատակային նշանակության գործընթացն ապահովելու նպատակով՝ ընկերությունն օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն կներկայացնի դիմում՝ թույլտվություն ստանալու ակնկալիքով:

Ծրագրի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող հատվածներում (մասնավորապես՝ սահուղու և ճոպանուղու համար) անտառահատում, փոխարենը՝ նոր անտառների մի քանի անգամ ավելի վերականգնման պայմանով (առաջին փուլով նախատեսված 10 հա մակերեսով անտառահատման տեղանքի քարտեզը ներկայացված է գծապատկեր 4-ի միջոցով):

Անտառահատումները, որքան էլ անցանկալի, անխուսափելի են լեռնային հանգստավայրերի ստեղծման գործում: Քանի որ ծրագիրն ունի շարունակական բնույթ, հնարավոր չէ նախօրոք հաշվարկել անտառահատումների ծավալը: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պարտավորվում է ապահովել անտառահատման ծավալից մի քանի անգամ ավելի ծավալով անտառի տնկման ֆինանսավորում՝ անկախ վերջինիս ծավալից:

8. 7-րդ կետով նշված 580 հա-ին կից 1500 հա տարածքի վարձակալություն (ցանկացած պահի և ցանկացած հատված գնելու իրավունքով)

Քանի որ ծրագիրն ունի նաև բիզնես ուղղվածություն՝ այս դրույթը ևս ծրագրի իրականացման անբաժանելի մաս է: Նշված 1500 հա տարածքից այն հատվածները, որոնք կհանդիսանան ճոպանուղիների ենթակառուցվածքների և շինությունների տեղակայման

հողամասեր, ընկերությունը դրանք ձեռք կբերի, իսկ մնացած հատվածները կօգտագործի վարձակալական հիմունքներով:

9. Ծրագիրն իրականացնողի մասնակցությունը քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմանը (Դիլիջանի զարգացման հիմնադրամի օրինակով)

Ծրագիրն իրականացնող կազմակերպության մասնակցությունը քաղաքաշինական փաստաթղթերի հաստատմանը հնարավորություն է ընձեռում ձևավորել միասնական տեսլական, ինչպես նաև գլխավոր հատակագծի և մեկ գաղափարախոսության շուրջ իրականացվող քաղաքաշինական նախագծերի պարագայում՝ քաղաքի առավել ամբողջական տեսքը:

Ծրագրի իրականացման տեղանքի քարտեզները ներկայացված են Գծապատկեր 5-ի միջոցով:

Ամփոփելով վերոգրյալը՝ ընկերությունը պատրաստակամություն է հայտնում մասնակցելու հանրային գերակա շահ ճանաչվող հատվածի հողերի փոխանակության (հավելումով) գործընթացին կամ ցանկացած այլ ձևաչափի քննարկմանը (ընդհուպ մինչև ԲԲԸ-ի ձևաչափով փայատիրական գործունեության համատեքստում):


Աղյուսակ 2. Առաջին փուլում կատարվելիք աշխատանքները՝ ըստ ժամանակացույցի

Կատարվելիք աշխատանքը	Ժամանակահատվածը*	Արժեքը (ԱՄՆ դոլար)
Ճոպանուղու ձեռքբերում, տեղափոխում ՀՀ, տեղադրում, մոնտաժ (2 հատ հոնդոլային, 1 հատ 6 տեղանոց աթոռային)	18 ամիս	27.000.000
Հյուրանոց (120 համար)	18 ամիս	3.000.000
Հյուրանոց, որում առկա է խաղատուն (150 համար)	24 ամիս	7.000.000
Լեռնային ճանապարհների ստեղծում, սահողիների կառուցում, քարամաքրման աշխատանքներ, ճմապատում և այլն	6 ամիս	1.000.000

Մտոնայտնողի ձեռքբերում, տեղափոխում ՀՀ, մոնտաժ	12 ամիս	500.000
«Magic Carpet»-ի ձեռքբերում, տեղափոխում ՀՀ, մոնտաժ	12 ամիս	500.000
«Snow Goomer»-ի ձեռքբերում, տեղափոխում ՀՀ	6 ամիս	1.500.000
Վարձակալության սրահներ (բազմապիսի գույքի համար)	12 ամիս	500.000
Սարի գազաթի ռեստորանի կառուցում	18 ամիս	1.000.000
«Topogun»-ի ձեռքբերում, տեղափոխում ՀՀ, մոնտաժ	12-րդ ամսից սկսած 18 ամսում	1.000.000
Հյուրանոց (120 համար)	12-րդ ամսից սկսած 18 ամսում	3.000.000
Ավտոկայանատեղի	12 ամիս	1.000.000
Հակալավինային համակարգի տեղադրում	12 ամիս	2.000.000
Մանկական սահադաշտի կառուցում, մանկական զբաղմունքի կենտրոն, բաց լողավազան	12-րդ ամսից սկսած 24 ամսում	3.000.000
Արհեստական ձնագոյացում. Սարքերի ձեռքբերում, տեղափոխում ՀՀ, մոնտաժ	12 ամիս	8.000.000

* 12 ամսից ավելի նշված բոլոր ժամկետները հաշվարկված են այն տեսակետից, որ ներառում են 2 ամսա:

Գծապատկեր 3. Կոմունիկացիաների նախանշված երկարությունները



Ավտոճանապարհ (երկարություն՝ 3 կմ, լայնություն՝ 8 մ)
Ջրագիծ (երկարություն՝ 4.5 կմ)



Էլեկտրականություն (երկարություն՝ 4 կմ)
Գազատար (երկարություն՝ 7.5 կմ)


Գծապարկեր 4. Անտառահատման իրականացման տեղանքի քարտեզ



Անտառահատվող տարածք (10 հա)

Գծապատկեր 5. Ծրագրի իրականացման տեղանքի քարտեզներ





Իրացման գոտի, մակերեսը՝ 580 հա

Վարձակալական գոտի, մակերեսը՝ 1500 հա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ